

Չիլ գեղգեղներ ու նըլազներ վրդովիչ,
 Ու ջութակի սարսուռին գիծը կարմիր...
 Արեւմարքին ծաղիկն, որ չի՛ թառամիր 1 [1],
 Ինքն ալ գինով ըզգլխանքէն այս թովիչ:

Աղմըկահար սոյլն ու արշաւն հովերուն,
 Զծծիւնները ծաղիկներուն խատուտիկ,
 Բարտիներու խարշափն ու ծափն հանդարտիկ,
 Եւ համերգը խանդոտ՝ գետին մուրրուն:

Կըստուարանայ այլքն հրճուտ այս ճիչին,
 Ու կը բաղխի հոգւոյս պորփիւր քարափին,
 Ու կ'ոռոգէ զիս փրփուրին մէջ ծըփին
 Երբ խնկագոյն լոյսերն ինձմէ կը փախչին:

Արծաթ լոյսերն հիմակ տակաւ կը ծաղկին,
 Ու կը ցայտէ թաւ հեծեծանքն ուտերուն 1 [1],
 Լազուարթ ժամեր լուսնի շիթ շիթ կաթիլքին
 Մէջ կը թրթռան իրենց համբոյրն անանուն...

Եւ հոգիներ կ'իյնան անոնց ծնրադիր,
 Սիրերգութեանց ըմպած հըմայքն հըրրեղէն.
 Պայեր անոնց միստիք ճամբան կը պեղեն,
 Ու 1 [1] կը ցնծան լոյսով՝ զէսիթ ու նատիր:

Ու կը բացուի փալփիւրն՝ գիշերն երջանիկ,
 Արծազանգներ կը խաղան դեռ հոս ու հոն.
 Զերթուած մըն է ցայգն համօրէն, ջի՛նջ գեղօն՝
 Որ կ'երփներգէ ծափ ու ծիծաղ ու ծաղիկ:

37. ԱՌՏԻԱՆ ԱՐԵԻՆ ՄԷՋ

Ահա՛ կ'անցնի ցայգս անթուն,
 Մութին ծածքը կը մաշի.
 Ու կը կայթէ կոյսն այգուն
 Իր քողքին մէջ մըշուշի:

Անցան սայլերն ալ դանդաղ,
 Ու մըշակներն երգեցիկ,